ք.Վանաձոր 03.12.2025թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին», «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման ծրագրին մասնակցելու մասին», «Վանաձոր համայնքի 2026 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին» և «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքում տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու և Վանաձոր համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 5-ի թիվ 4-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Վանաձոր համայնքի ավագանու որոշման նախագծերի վերաբերյալ հանրային լսումների:

Ներկաներին ողջունեց Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատար Արկադի Փելեշյանը. նախ և առաջ ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Ձեզ պարոն մարզպետ, ինչպես նաև մարզպետի աշխատակազմին պատրաստակամություն հայտնելու ներկա գտնվել հանրային լսմանը, որը աննախադեպ է, քանի որ նախատեսվում է լայնածավալ շինարարական աշխատանքներ ի նպաստ Վանաձոր համայնքի բարեկարգմանը: Այնուհետև խոսքը փոխանցեց Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հայկ Վիրաբյանին, ով ներկայացրեց հանրային քննարկումների նպատակը. համաձայն Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատար Արկադի Փելեշյանի 2025 թվականի նոյեմբերի 14-ի N 2456 որոշման, 2025 թվականի դեկտեմբերի 1-ին, ժամը 14:30-ին Վանաձորի համայնքապետարանի վարչական շենքի ավագանու նիստերի դահլիճում տեղի է ունենում «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին», «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման ծրագրին մասնակցելու մասին», «Վանաձոր համայնքի 2026 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին» և «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքում տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու և Վանաձոր համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 5-ի թիվ 4-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Վանաձոր համայնքի ավագանու որոշման նախագծերի վերաբերյալ հանրային քննարկում:

Համայնքապետարանի պաշտոնական ինտերնետային կայք էջում տեղադրվել է հանրային լսումների հրավերը https://vanadzor.am/content/3708, ինչպես նաև այն փակցվել է համայնքի ղեկավարի նստավայրում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում: Այնուհետև խոսքը փոխանցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Վահե Գրիգորյանին, ով մանրամասն ներկայացրեց Վանաձոր համայնքի 2026 թվականի բյուջեի նախագիծը. 2026 թվականի բյուջեի սահմանափակ միջոցները համայնքային նշանակության հիմնախնդիրների լուծման ուղղությամբ ծրագրերը ֆինանսավորելու համար բաշխվել են այնպես, որպեսզի հնարավորինս արդյունավետ բավարարվեն համայնքի հանրության կարիքներն ու պահանջները և հաշվի առնելով այն հանգամանքը, որ բյուջեն կազմվել է, որպես խոշորացված Վանաձոր համայնքի բյուջե, այն ներառում է նաև միավորված գյուղական համայնքների խնդիրների լուծումը: Բյուջեում ներկայացված են տարվա ընթացքում համայնքի ղեկավարի լիազորությունների ուղղությամբ կատարվելիք ծրագրերը և դրանց իրականացման համար անհրաժեշտ միջոցները:

Վանաձոր համայնքի 2026 թվականի համար գերակա են համարվելու՝

1. Համայնքի համաչափ և կայուն զարգացման ապահովումը:
2. Պետական մասնակցությամբ սուբվենցիոն ծրագրերի իրականացումը:
3. Նախակրթական, մշակութային և սպորտային համայնքային կազմակերպությունների շարունակական աշխատանքների կազմակերպումը և հնարավորության դեպքում հիմնանորոգման աշխատանքների ապահովումը:
4. Համայնքի փողոցների և մայթերի հիմնանորոգումը:
5. Փողոցային լուսավորության համակարգի արդիականացումը և նոր թաղամասերի լուսավորությամբ ապահովումը:
6. Համայնքում աղբահանության անխափան կազմակերպումը և սանիտարական մաքրման աշխատանքների բարելավումը:
7. Համայնքի բնակչության համար մշակութային և սպորտային բազմաբովանդակ միջոցառումների կազմակերպումը:
8. Հասարակական տրանսպորտի ճկուն համակարգ ստեղծելու նպատակով նոր ավտոբուսների ձեռքբերում:

2026 թվականի բյուջեի եկամուտների իրատեսական կանխատեսումների համար հաշվի է առնվել նախորդ տարիներին տեղական հարկերի, տուրքերի և վճարների գանձելիության մակարդակը, ինչպես նաև տվյալ բնագավառում առկա խնդիրների առաջացման պատճառները ու դրանք հաղթահարելու հնարավորությունները: Հիմք են հանդիսացել համայնքապետարանի համապատասխան բաժինների կողմից ներկայացված տեղեկությունները ընթացիկ բյուջետային տարվա հաշվարկային եկամուտների և գոյացած ապառքների վերաբերյալ: 2026 թվականի բյուջեում շենքերի և շինությունների գույքահարկի գծով հարկը նպատակահարմար է կանխատեսել 4 000 000 դրամ, իսկ հողի հարկը՝ 2 000 000 դրամ: Քանի որ 2026 թվականի բյուջեով շինությունների գույքահարկի և հողի հարկի գծով կանխատեսվում է հավաքագրման աճ, նպատակահարմար է անշարժ գույքի հարկի գծով նախատեսել 300 000 000 դրամ: 2026 թվականի բյուջեում նպատակահարմար է ֆիզիկական անձանց փոխադրամիջոցների գծով գույքահարկը նախատեսել 700 000 000 դրամ, իսկ իրավաբանական անձանց փոխադրամիջոցների գծով գույքահարկը նախատեսել 10 000 000 դրամ:

Համայնքի 2026 թվականի բյուջեում ներառված ծախսային ծրագրերը ունեն ՀՀ օրենսդրությունից բխող իրենց իրավական հիմքերն ու բովանդակությունը, նախանշվել է դրանց կատարման փուլերն ու ժամկետները, ինչպես նաև հաշվի է առնվել ծրագրերի իրագործման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գործող գները:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագրի անվանումը

«Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում»

Ծրագրի իրականացման նպատակը

Օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում համայնքի բնակչությանը որակյալ ծառայությունների մատուցման համար համայնքապետարանի աշխատակազմի պահպանում:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի համար ստեղծել պատշաճ աշխատանքային պայմաններ, օրենքով սահմանված լիազորությունների և պարտավորությունների լիարժեք իրականացման համար:

Ծրագրի բյուջեն
2026 թվականի համար Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի պահպանման ծախսերը կազմում են **934775.0** **հազ. դրամ:**
Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը
01 հունվարի – 30 դեկտեմբերի 2026 թվական
Տեղեկանք հիմնավորում
Աշխատակազմի պահպանման ծախսերը հաշվարկելիս հաշվի են առնվել նախորդ տարիների ընթացքում կատարված փաստացի ծախսերը, ինչպես նաև կառուցվածքային ստորաբաժանումների կողմից իրենց բաժինների բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումները:
2026 թվականի համար համայնքապետարանի աշխատակազմի աշխատավարձի ֆոնդը պլանավորվել է 188 հաստիքային միավորի համար, հիմք ընդունելով ավագանու կողմից հաստատած հաստիքացուցակը:
Ծառայությունների գծով իրականացվելու են՝
Կոմունալ և կապի ծառայություններ,
Արտաքին կապեր /քույր քաղաքների փոխադարձ այցելություններ/,
Կառավարման տեղեկատվական համակարգի սպասարկում /cmis.vanadzor.am/,
vanadzor.am կայք էջի հոսթինգ /10gb/,
Etransport.am mapgis.am հոսթինգ,
am- դոմեյն գոտու համար,
Earlyone ծրագիր,
Համայնքապետարանի քարտրիջների սպասարկում,
Համակարգչային տեխնիկայի սպասարկում,
Ինտերնետ կապ,
Համայնքում տեղադրված տեսանկարահանող սարքերի սպասարկում:
Հիմնական միջոցների մասով նախատեսվել են՝
Համայնքի վարչական շենքերի վերանորոգում,
Լոկալ ջեռուցման համակարգի ստեղծում,
Համայնքապետարանի ներքին ցանցի արդիականացում, համակարգչային տեխնիկայի թարմացում, տեսանկարահող սարքերի և գույքի ձեռքբերում,
Համակարգչային լիցենզավորված ծրագրերի ձեռքբերում,
Աղբարկղների տարածքների համար տեսանկարահանող սարքերի ձեռքբերում /տեղադրումով/:

Ծրագրի անվանումը
«Աշխատակազմի /կադրերի/ գծով ընդհանուր բնույթի ծառայություններ»
Ծրագրի իրականացման նպատակը
ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորում» ծրագրով նախատեսված միջոցներով Վանաձորի տարածքային բաժնի պահպանում:
Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է
Համայնքում ստեղծված սպասարկման կենտրոնի կողմից կազմակերպել քաղաքացիական կացության ակտերի գրանցման հետ կապված գործառույթները:
Ծրագրի բյուջեն
2026թ. համար նախատեսվում է **5997.0** **հազ. դրամ:**
Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը
01 հունվարի – 30 դեկտեմբերի 2026 թվական

Տեղեկանք հիմնավորում

Նախատեսվող գումարների հաշվարկները կատարելիս հաշվի են առնվել տվյալ ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված նորմերի պահանջները:

Ծրագրի անվանումը

«Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ»

Ծրագրի իրականացման նպատակը

«Հաշվապահ» ՀՈԱԿ-ի միջոցով կիրականացվեն համայնքից սուբսիդավորվող թվով 57 համայնքային ոչ առևտրային կամակերպությունների հաշվապահական գործընթացը և վարձավճարների հավաքագրումը:

«Նեցուկ ՀՁ» և «Վանաձորի քաղաքային տնտեսություն» ՀՈԱԿ-ների գործունեության նպատակն է համայնքում մշտապես մաքուր պահել համայնքի փողոցները, մայթերը, բակային տարածքները, պահպանել համայնքի կանաչ տարածքների խնամքը և նոր կանաչապատ տարածքներ ստեղծել: Քաղաքի բնակիչների և հյուրերի համար ստեղծել առավել բարենպաստ և գրավիչ հանգստի վայրեր:

«Աջակցություն համատիրություններին» ծրագրի նպատակն է ֆինանսապես աջակցել համայնքի տարածքում գործող համատիրություններին պատկանող բազմաբնակարան շենքերի տանիքների, վերելակների և շքամուտքերի բարեկարգման աշխատանքների կազմակերպմանը:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է

ՈՒնենալ մաքուր, գրավիչ և սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան տարածքներ, որոնք կօգտագործվեն համայնքի բնակիչների և այցելուների կողմից, ստեղծել առավել բարենպաստ պայմաններ բնակիչների հանգստի և ժամանցի համար, ինչպես նաև համատիրություններին աջակցության շնորհիվ բարելավել համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքները, վերելակները և շքամուտքերը:

Ծրագրի բյուջեն

2026թ. համար նախատեսվում է **625622.0 հազ.դրամ:**

Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը

01 հունվարի – 30 դեկտեմբերի 2026 թվական

Տեղեկանք հիմնավորում

Ծրագիրը իրականացվելու է համայնքի թվով 3 համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների /ՀՈԱԿ-ներ/ միջոցով: Բյուջեի կազմման համար հիմք է հանդիսացել կազմակերպությունների կողմից ներկայացված նախահաշիվները, տարիֆիկացիաները, ավագանու կողմից հաստատած հաստիքացուցակները և գնման հայտերը: Պահպանման ծախսերը հաշվարկելիս հաշվի են առնվել նաև նախորդ տարիների ընթացքում կատարված փաստացի ծախսերը:

«Հաշվապահ» ՀՈԱԿ-ի միջոցով կիրականացվեն համայնքից սուբսիդավորվող թվով 57 համայնքային ոչ առևտրային կամակերպությունների հաշվապահական գործընթացը: Աշխատավարձի ֆոնդը պլանավորվել է 45 հաստիքային միավորի համար:

«Նեցուկ ՀՁ» ՀՈԱԿ-ի միջոցով կիրականացվեն կանաչ տարածքների խնամքն ու նոր կանաչապատ տարածքների ստեղծում, ընդհանուր օգտագործման հանրային տարածքների բարեկարգման և ձմեռային պաշտպանության աշխատանքները: Աշխատավարձի ֆոնդը պլանավորվել է 31 հաստիքային միավորի համար:

«Վանաձորի քաղաքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի միջոցով կիրականացվեն աղբահանության, փողոցների, մայթերի, բակային տարածքների մաքրման և բարեկարգման աշխատանքներ: Աշխատանքները իրականացվելու են հիմնարկին պատկանող թվով 10 աղբատար մեքենաների և թվով 5 այլ հատուկ տեխնիկաների (էքսկավատոր, բարձիչ, մաքրող-հավաքող մեքենա) միջոցով: Աշխատավարձի ֆոնդը պլանավորվել է 27 հաստիքային միավորի համար:

Ծրագրի անվանումը

«Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)»

Ծրագրի իրականացման նպատակը

Գույքի նկատմամբ իրավունքների գրանցման և տեղեկատվության, մասնագիտական եզրակացությունների տրամադրում:

«Գուգարք բնակավայրի շիրմատուն» բյուջետային հիմնարկի միջոցով իրականացնել բնակավայրի շիրմատան հետ կապված ծառայությունները:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է

Անշարժ գույքի տեխնիկական վիճակի վերաբերյալ /սեյսմիկ/ եզրակացության գնահատում:

Ծրագրի բնագավառում որակյալ ծառայությունների մատուցում:

Ծրագրի բյուջեն

2026 թվականի համար նախատեսվում է **48282.0 հազ.դրամ:**

Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը

01 հունվարի – 30 դեկտեմբերի 2026 թվական

Տեղեկանք հիմնավորում

«Գուգարք բնակավայրի շիրմատուն» բյուջետային հիմնարկի ծախսերը հաշվարկելիս հիմք է հանդիսացել կազմակերպության կողմից ներկայացված նախահաշիվը, տարիֆիկացիան, ավագանու կողմից հաստատած հաստիքացուցակը և գնման հայտը: Պահպանման ծախսերը հաշվարկելիս հաշվի են առնվել նաև նախորդ տարիների ընթացքում կատարված փաստացի ծախսերը: Աշխատավարձի ֆոնդը պլանավորվել է 5 հաստիքային միավորի համար:

Ծրագրի անվանումը

«Քաղաքացիական պաշտպանություն»

Ծրագրի իրականացման նպատակը

Համայնքում ազդարարման համակարգերի (շչակների) ձեռք բերում:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է

Համայնքում ապահովել քաղաքացիների պաշտպանությունը:

Ծրագրի բյուջեն

2026 թվականի համար նախատեսվում է **3520.0 հազ.դրամ:**

Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը

03 հունվարի – 30 դեկտեմբերի 2026 թվական

Տեղեկանք հիմնավորում

Վանաձոր համայնքին անհրաժեշտ է թվով վեց հատ U-40 մոդելի շչակ, Գուգարք բնակավայրին թվով երեք հատ U-40 մոդելի շչակ, Դարպաս բնակավայրին թվով մեկ հատ U-40 մոդելի շչակ, Շահումյան բնակավայրին թվով մեկ հատ U-40 մոդելի շչակ:Ընդհանուր առմամբ անհրաժեշտ է ձեռք բերել թվով 11(տասնմեկ) հատ U-40 մոդելի շչակ, իսկ յուրաքանչյուր շչակի գինը 320 000 (երեք հարյուր քսան հազար) ՀՀ դրամ է:

Ծրագրի անվանումը

«Գյուղատնտեսություն»

Ծրագրի իրականացման նպատակը

«***Բուսաբուծության աջակցություն***» ծրագրի շրջանակում կատարել գարնանացան հացահատիկային (գարնանացան ցորեն և գարի, վարսակ, հաճար, եգիպտացորեն), հատիկաընդեղեն (լոբի, ոլոռ, ոսպ, սիսեռ) մշակաբույսերի և բազմամյա խոտաբույսերի (առվույտ, կորնգան) ցանքատարածություններ:

Ծրագրի նպատակն է նաև համայնքում իրականացնել անասնաբուժական ծառայությունների մատուցում:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է

Համայնքում ապահովել և պատշաճ ձևով իրականացնել գարնանացան աշխատանքները և անասնաբուժական ծառայությունները:

Ծրագրի բյուջեն

2026 թվականի համար նախատեսվում է **8500,0 հազ.դրամ:**

Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը

01 հունվարի – 30 դեկտեմբերի 2026 թվական

Տեղեկանք հիմնավորում

Ծրագրի իրականացման համար հիմք է հանդիսացել «*Բուսաբուծության աջակցություն*» ծրագրի շրջանակներում *պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների վերաբերյալ պայմանագիրը՝ կնքված էկոնոմիկայի նախարարության և Վանաձորի համայնքապետարանի միջև:*

Ծրագրի անվանումը

«Ճանապարհային տրանսպորտ»

Ծրագրի իրականացման նպատակը

Հիմնովին կամ մասնակի վերանորոգել փողոցների, մայթերի և բակային տարածքների քանդված ասֆալտբետոնե ծածկը (ասֆալտապատում և խճապատում): Փողոցների նշագծման, ճանապարհային նշանների տեղադրման, համայնքի կարիքների համար սուբվենցիոն ծրագրով ներհամայնքային ավտոբուսների ձեռք բերման միջոցով ճանապարհային երթևեկությունը դարձնել անվտանգ ուղևորների, հետիոտնի և տրանսպորտային միջոցների շահագործման համար:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է

Քաղաքի փողոցները, մայթերը և բակային տարածքները կլինեն առավել բարեկարգ, կապահովվի տրանսպորտային միջոցների անվտանգ երթևեկությունը և մասնակիորեն կվերանան անհարմարությունները բնակիչների համար:

Ծրագրի բյուջեն

2026թ. համար նախատեսվում է **7986235,1** հազ. դրամ:

Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը

01 հունվարի – 30 դեկտեմբերի 2026 թվական

Տեղեկանք հիմնավորում

Տրանսպորտային միջոցների և բնակիչների անվտանգ երթևեկության կազմակերպման համար անհրաժեշտ է տեղադրել ճանապարհային երթևեկության նշաններ և նշագծել փողոցները: Իրականացնել փողոցների, մայթերի, կանգառների, կամուրջների և հենապատերի հիմնանորոգման աշխատանքներ, խճապատել որոշ երկրորդական փողոցներ:

Փողոցներում կատարել նախնական փոսալցման աշխատանքներ, որը հնարավորություն կընձեռի մինչև հիմնական փողոցաշինական աշխատանքների սկսելը ապահովել քաղաքային տրանսպորտի անվտանգ երթևեկությունը:

2026 թվականին կառավարության հետ համատեղ սուբվենցիոն ծրագրերով նախատեսվում է կապիտալ վերանորոգել համայնքի Բանակի, Բաթումի, Շիրակացի, Մյասնիկյան, Տարոն-4 թաղամասի, Դարպաս և Շահումյան բնակավայրերի փողոցները: Սուբվենցիոն ծրագրերով նախատեսվում է նաև Վանաձոր համայնքի կարիքների համար ձեռք բերել ներհամայնքային ավտոբուսներ: Ծրագրում ներառվել են նաև 2024 և 2025 թվականներին չիրականացված սուբվենցիոն ծրագրերը:

Ծրագրի անվանումը
«Զբոսաշրջություն»
Ծրագրի իրականացման նպատակը
Համայնքում զբոսաշրջության հետ կապված հարաբերությունների կարգավորում, գովազդային ծրագրերի կազմակերպում, գովազդող գրականության պատրաստում և տարածում:
Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է
Համայնքում կարգավորել և զարգացնել զբոսաշրջությունը:
Ծրագրի բյուջեն
2026թ. համար նախատեսվում է **15000.0** հազ. դրամ:
Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը
01 հունվարի – 30 դեկտեմբերի 2026 թվական

Ծրագրի անվանումը
«Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)»
Ծրագրի իրականացման նպատակը
Համայնքի ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի դիմաց նախատեսել ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր:
Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է
Համայնքի ոչ ֆինանսական ակտիվների իրացումով նախատեսված մուտքերի չափով իրականացնել բյուջեով նախատեսված կապիտալ ծախսերը:
Ծրագրի բյուջեն
2026թ. համար նախատեսվում է **2125037,0** հազ. դրամ:
Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը
01 հունվարի – 30 դեկտեմբերի 2026 թվական

Ծրագրի անվանումը
«Աղբահանում»
Ծրագրի իրականացման նպատակը
Մշտապես մաքուր պահել համայնքի փողոցները, մայթերը, բակային տարածքները, հուշարձանների և այլ ինժեներական կառույցների հարակից տարածքները՝ պահպանելով ընդունված սանիտարահիգիենիկ պահանջները: Բացառել մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա թափոնների բացասական ներգործությունը:
Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է
Ունենալ մաքուր գրավիչ և սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան տարածքներ, որոնք կօգտագործվեն համայնքի բնակիչների և այցելուների կողմից:
Ծրագրի բյուջեն
2026 թվականին այս ծրագրի համար նախատեսվել է **146000,0 հազ. դրամ:**
Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը
01 հունվարի – 30 դեկտեմբերի 2026 թվական
Տեղեկանք հիմնավորում
Համայնքում կազմակերպել սանմաքրման, աղբահանության, ձմեռային պաշտպանության, շաբաթօրյակների և խոշոր եզրաչափերի աղբի տեղափոխման աշխատանքները: Նախատեսվում է ձեռք բերել նոր աղբարկղներ:

Ծրագրի անվանումը
«Կեղտաջրերի հեռացում»
Ծրագրի իրականացման նպատակը
Համայնքում իրականացնել կեղտաջրերի հեռացման հետ կապված աշխատանքները:
Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է
Բարելավել անձրևաջրատար համակարգը, պատշաճ կազմակերպել ջրահեռացումը:
Ծրագրի բյուջեն
2026թ. այս ծրագրով նախատեսվում է 512000,0 հազ. դրամ:
Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը
01 հունվարի – 30 դեկտեմբերի 2026 թվական
Տեղեկանք հիմնավորում
Անձրևաջրատար ընդունիչ դիտահորերի, կոյուղագծերի մաքրում և սպասարկում, *կոյուղագծերի նորոգման աշխատանքներ, անձրևաջրատար ընդունիչ դիտահորերի և կափարիչների հիմնանորոգում, անձրևաջրատար համակարգի կառուցում: Սուբվենցիոն ծրագրով նախատեսվում է Վանաձոր համայնքի* մի շարք թաղամասերում կառուցել կոյուղիներ:

Ծրագրի անվանումը
«Շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքար»
Ծրագրի իրականացման նպատակը
Համայնքի վարչական տարածքում կունենանք հոսող գետերի և մերձակա տարածքների պատշաճ սանիտարահիգիենիկ վիճակ:
Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է
Համայնքում գարնանային վարարումների ժամանակ կնվազեցվի գետերի վրայով անցնող հետիոտնային կամուրջների փլուզման հավանականությունը:
Ծրագրի բյուջեն
2026 թվականի համար նախատեսվում է **10000.0 հազ. դրամ:**
Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը
01 հունվարի – 30 դեկտեմբերի 2026 թվական
Տեղեկանք հիմնավորում
Վանաձոր համայնքում գործում են չորս գետեր՝ Տանձուտ, Փամբակ, Բզովդալ և Խաչի ձորից իջնող գետակ: Գետերի հուները մաքրվում են ապրիլ-մայիս-հունիս ամիսներին: Հուները կմաքրվեն կենցաղային աղբից, թաց տիղմից և քարերից:

Ծրագրի անվանումը
«Կենսաբազմազանության և բնության պաշտպանություն»
Ծրագրի իրականացման նպատակը
Վանաձոր համայնքի տարածքում տարեցտարի ավելացող թափառող կենդանիների դեմ պայքարի իրականացում բնակչության համար առավել անվտանգ պայմաններ ապահովելու համար:
Վանաձոր համայնքի կողմից հարազատ չունեցող անձանց հուղարկավորության և գերեզմանատների սպասարկման աշխատանքների իրականացում:
Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է
Թափառող կենդանիների վնասազերծման միջոցով լուծել հանրային առողջությանն ու անվտանգությանը սպառնացող հիմնախնդիրը և պատշաճ ձևով կազմակերպել հարազատ չունեցող անձանց հուղարկավորությունը:

Ծրագրի բյուջեն
2026 թվականի համար նախատեսվում է **25854,0 հազ. դրամ:**
Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը
01 հունվարի – 30 դեկտեմբերի 2026 թվական
Տեղեկանք հիմնավորում
Նախատեսվում է թափառող կենդանիների վնասազերծման (ստերիլիզացիա) ծառայությունների գնման համար հայտարարել մրցույթ՝ 15.000.0 հազ. դրամ:
Հարազատ չունեցող անձանց հուղարկավորության և գերեզմանատների սպասարկման աշխատանքները կիրականացվեն «Վանաձորի սպասարկում» ՀՈԱԿ-ի միջոցով:
Աշխատավարձի ֆոնդը պլանավորվել է 6 հաստիքային միավորի համար, նախատեսված սուբսիդիայի գումարը ներառում է նաև զբաղեցրած տարածքի կոմունալ վարձերի վճարման և ծառայությունների մատուցման ծախսերը:

Ծրագրի անվանումը
«Բնակարանային շինարարություն»
Ծրագրի իրականացման նպատակը
Ապահովել Վանաձոր համայնքի բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի իրականացման աշխատանքները, հանրակացարանների ընթացիկ նորոգումը, բազմաբնակարան շենքերի վերելակների և տանիքների նորոգումը:
Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է
Առավել բարեկարգ և շահագործման համար անվտանգ դարձնել բազմաբնակարան շենքերի վերելակները, նկուղներն ու տանիքները, բարելավել համայնքի բնակչության պատսպարումն ապահովող ապաստարանները:
Ծրագրի բյուջեն
2026 թվականի համար նախատեսվում է **670000,0 հազ. դրամ:**
Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը
01 հունվարի – 30 դեկտեմբերի 2026 թվական
Տեղեկանք հիմնավորում
Վանաձոր համայնքում բնակչության բարեկեցության բարելավման համար անհրաժեշտ է հիմնանորոգել բազմաբնակարան շենքերի տանիքները, մաքրել և նորոգել համայնքի բնակչության պատսպարումն ապահովող ապաստարանները և սուբվենցիոն ծրագրով բազմաբնակարան շենքերում հիմնանորոգել վերելակները՝ նորերի տեղադրումով:

Ծրագրի անվանումը
«Համայնքային զարգացում»
Ծրագրի իրականացման նպատակը
Դոնոր կազմակերպությունների հետ համատեղ ծրագրերի միջոցով նպաստել համայնքային զարգացմանն ուղղված հիմնախնդիրների լուծմանը:
Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է
Համայնքի և կազմակերպությունների համատեղ աշխատանքի արդյունքում կիրականացվեն բնակչության առջև դրված մի շարք խնդիրներ:
Ծրագրի բյուջեն
2026 թվականին այս ծրագրով նախատեսվել է **100.000.0 հազ. դրամ:**
Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը
01 հունվարի – 30 դեկտեմբերի 2026 թվական

Տեղեկանք հիմնավորում
Վանաձոր համայնքի բնակչության բարեկեցության բարելավումը պարտադրում է գտնել բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգման, բարձրահարկ շենքերի վերելակների վերագործարկման, խաղահրապարակների, մերձբակային տարածքներում հանգստյան գոտիների կառուցման, բարեկարգ բակեր ունենալուն ուղղված ծրագրերը հովանավորող դոնոր կազմակերպություններ:

Ծրագրի անվանումը
«Ջրամատակարարում»
Ծրագրի իրականացման նպատակը
Ծրագրի նպատակն է քաղաքի ճարտարապետական տեսքի բարեկարգումը, արդիականացումը:
Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է
Լուսային էֆեկտներով շատրվանների առկայությամբ հրապարակը կհանդիսանա տեսարժան վայր և կնպաստի զբոսաշրջիկների հոսքի ավելացմանը:
Ծրագրի բյուջեն
2026 թվականին այս ծրագրով նախատեսվել է **16000.0 հազ. դրամ:**
Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը
01 հունվարի – 30 դեկտեմբերի 2026 թվական
Տեղեկանք հիմնավորում
Ծրագրով նախատեսվում է ֆինանսավորել շատրվանների նորոգման և սպասարկման աշխատանքները, ինչպես նաև ցայտաղբյուրների համար ձեռք բերել ու տեղադրել փականներ:

Ծրագրի անվանումը
«Փողոցների լուսավորում»
Ծրագրի իրականացման նպատակը
Երեկոյան և գիշերային ժամերին համայնքի երթևեկելի և բակային տարածքների լուսավորում, շենքերի և կառույցների գեղարվեստական լուսավորության ապահովում:
Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է
Երեկոյան ժամերին առավել հարմարավետ և անվտանգ դարձնել փողոցային երթևեկությունը, ապահովել շինությունների և կառույցների գեղարվեստական լուսավորում, առավել գրավիչ դարձնել դրանց տեսքը:
Ծրագրի բյուջեն
2026 թվականին այս ծրագրով նախատեսվել է **232433,0 հազ. դրամ:**
Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը
01 հունվարի – 30 դեկտեմբերի 2026թվական
Տեղեկանք հիմնավորում
Փողոցների լուսավորում ծրագրով 2026 թվականի համար նախատեսված ֆինանսական միջոցները ուղղվելու են փողոցային լուսավորության, լուսաֆորային օբյեկտների համակարգի էներգետիկ ծառայությունների սպառմանը, շենքերի արտաքին լուսավորության համակարգի սպասարկմանը, փողոցային լուսավորության վերականգնմանը: Սուբվենցիոն ծրագրերով նախատեսվում է կառուցել և արդիականացնել փողոցների լուսավորության համակարգը:

Ծրագրի անվանումը
«Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ»

Ծրագրի իրականացման նպատակը
Համայնքի կարիքների համար իրականացվող քաղաքաշինական, շինարարական և հետազոտական աշխատանքների համար օրենքով սահմանված կարգով հետազոտությունների, փորձաքննությունների և նախագծանախահաշվային փաստաթղթերի ապահովում:
Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է
Համայնքի կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերով հիմնավորված քաղաքաշինական ծրագրերի իրականացում՝ սահմանված օրենսդրական նորմերին համապատասխան:
Ծրագրի բյուջեն
Նշված ուղղությամբ 2026թ. համար նախատեսվել է **150000,0 հազ. դրամ:**
Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը
01 հունվարի – 30 դեկտեմբերի 2026 թվական
Տեղեկանք հիմնավորում
Նախատեսվող գումարների հաշվարկները կատարելիս հաշվի են առնվել տվյալ ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված նորմերի պահանջները և աշխատանքների ու ծառայությունների գործող շուկայական գները:

Ծրագրի անվանումը
«Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)»
Ծրագրի իրականացման նպատակը
Ստեղծել բարեկարգ հասարակական նշանակության տարածքներ, բակային տարածքներ հանգստի և ժամանցի համար, խաղահրապարակներ երեխաների համար:
Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է
Բակերը բերել բարեկարգ տեսքի, բարելավել բնակիչների հանգստի կազմակերպումը, ստեղծել հաճելի պայմաններ երեխաների ժամանցի և խաղերի համար:
Ծրագրի բյուջեն
Նշված ուղղությամբ 2026թ. համար նախատեսվում է **1595327,0 հազ. դրամ:**
Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը
01 հունվարի – 30 դեկտեմբերի 2026 թվական
Տեղեկանք հիմնավորում
Ծրագրի համայնքի բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցները կուղղվեն բազմաբնակարան շենքերի բակերում և մերձբակային տարածքներում խաղահրապարակների, ցանկապատերի կառուցմանը, ինքնակամ կառույցների ապամոնտաժման և քանդման աշխատանքների կազմակերպմանը և բակերի կապիտալ նորոգմանը: 2026թ սուբվենցիոն ծրագրերով կառավարության հետ համատեղ նախատեսվում է իրականացնել համայնքի բակերի հիմնանորոգման և նոր խաղահրապարակների կառուցման աշխատանքներ:

Ծրագրի անվանումը
«Հանգստի և սպորտի ծառայություններ»
Ծրագրի իրականացման նպատակը
Համայնքում սպորտային միջոցառումների միջոցով զարգացնել ֆիզիկական դաստիարակությունը, հայտնաբերել և մեծ սպորտ ուղղորդել տաղանդավոր երեխաներին: Ստեղծել համայնքի մարզիկների պարապմունքների համար պայմաններ, ապահովել նրանց մասնակցությունը հանրապետական և միջազգային նշանակության միջոցառումներին, որոնք նպատակաուղղված են հանրապետության լավագույն մարզիկների բացահայտմանը:

Ստեղծել բարեկարգ հասարակական նշանակության տարածքներ հանգստի և ժամանցի համար: Բարեկարգ այգիներում և պուրակներում մարդկանց հանգստի և ժամանցի նպատակով ձեռք բերել և տեղադրել նստարաններ և զրուցարաններ:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է

Պատանիների և երիտասարդության շրջանում մասսայական դարձնել սպորտը ու առողջ ապրելակերպը, նպաստել առողջ հասարակություն ունենալու գործին: Մինչև 15 տարեկան սովորողների և բարձր տարիքի երիտասարդների շրջանում ֆիզիկական դաստիարակության ապահովում: Մարզական դաստիարակչական ծրագրերի իրականացում մարզադպրոցներում: Միջազգային մրցաշարերում տարած հաղթանակների միջոցով առավել հայտնի դարձնել մեր երկիրը և քաղաքը:

Համայնքի հրապարկները, պուրակներն ու այգիները դարձնել ավելի բարեկարգ տեսքի, բարելավել բնակիչների հանգստի կազմակերպումը, ստեղծել հաճելի պայմաններ երեխաների ժամանցի և խաղերի համար: Նստարանների և զրուցարանների տեղադրմամբ առավել կազմակերպված դարձնել մարդկանց հանգիստն ու ժամանցը:

Ծրագրի բյուջեն

2026 թվականի համար այս գծով նախատեսված է **377372,8 հազ. դրամ:**

Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը

01 հունվարի – 30 դեկտեմբերի 2026 թվական

Տեղեկանք հիմնավորում

2026թ. ընթացքում նախատեսվում է կազմակերպել և անցկացնել տարբեր մարզաձևերից մի շարք քաղաքի առաջնություններ, համայնքի տասը լավագույն մարզիկների մեծարման միջոցառում, «Վանաձորի օրվան» և երիտասարդության միջազգային օրվան նվիրված միջոցառումներ, նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղեր, մանկապարտեզների սպորտլանդիա, հաշմանդամություն ունեցող անձանց շախմատի և շաշկու առաջնություն:

2026թ սուբվենցիոն ծրագրերով կառավարության հետ համատեղ նախատեսվում է իրականացնել Վանաձոր համայնքի «Հրանտ Մաթևոսյանի անվան» զբոսայգու հիմնանորոգման աշխատանքները:

Ծրագրի անվանումը

«Գրադարաններ»

Ծրագրի իրականացման նպատակը

Համայնքի գրադարանների պահպանման միջոցով բնակչության բոլոր խավերին ապահովել գեղարվեստական, մասնագիտական և տեխնիկական գրականությամբ: Գեղագիտական դաստիարակության ապահովում, կրթական համակարգի գործունեության օժանդակում:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է

Ավելացնել գրադարանային ծառայություններից օգտվողների թիվը՝ բարձրացնելով սպասարկման որակը, թարմացնել և արդիականացնել գրադարանային ֆոնդը:

Ծրագրի բյուջեն

2026 թականին նախատեսվում է **46793,0 հազ. դրամ:**

Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը

01 հունվարի – 30 դեկտեմբերի 2026 թվական

Տեղեկանք հիմնավորում

Ծրագիրը իրականացվում է համայնքից սուբսիդավորվող «Վանաձոր համայնքի գրադարանների կենտրոնացված համակարգ» ՀՈԱԿ-ի և Գուգարք բնակավայրում գործող գրադարան բյուջետային հիմնարկի պահպանման ծախսերի միջոցով:

Բյուջեի կազմման համար հիմք է հանդիսացել կազմակերպությունների կողմից ներկայացված նախահաշիվները, տարիֆիկացիաները, ավագանու կողմից հաստատած հաստիքացուցակները և գնման հայտերը: Պահպանման ծախսերը հաշվարկելիս հաշվի են առնվել նաև նախորդ տարիների ընթացքում կատարված փաստացի ծախսերը:
«Վանաձոր համայնքի գրադարանների կենտրոնացված համակարգ» ՀՈԱԿ-ում գործում են թվով 4 գրադարաններ, համաձայն ավագանու կողմից հաստատված հաստիքացուցակի աշխատավարձի ֆոնդը պլանավորվել է 21 հաստիքային միավորի համար: Գուգարք բնակավայրի գրադարանի պահպանման ծախսերի աշխատավարձի հոդվածով նախատեսված գումարը հաշվարկվել է աշխատողների 5 հաստիքային միավորի համար:

Ծրագրի անվանումը
«Թանգարաններ և ցուցասրահներ»
Ծրագրի իրականացման նպատակը
Համայնքի բնակչության բոլոր խավերին, համայնք այցելած զբոսաշրջիկներին և հյուրերին պատմամշակութային և գրական ժառանգության հետ ծանոթացում:
Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է
Ավելացնել համայնք այցելած զբոսաշրջիկների և հյուրերի թիվը, դրա արդյունքում համայնքը դարձնել ավելի գրավիչ և ճանաչված արտերկրում:
Ծրագրի բյուջեն
2026 թվականի համար ծրագրի բյուջեն կազմում է **65686,0 հազ. դրամ:**
Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը
01 հունվարի – 30 դեկտեմբերի 2026 թվական
Տեղեկանք հիմնավորում
Բյուջեի կազմման համար հիմք է հանդիսացել կազմակերպությունների կողմից ներկայացված նախահաշիվները, տարիֆիկացիաները, ավագանու կողմից հաստատված հաստիքացուցակները: Ոլորտն ունի թվով 2 թանգարան: Նախատեսված սուբսիդիայի գումարները ներառում են կազմակերպությունների աշխատողների աշխատավարձերը՝ 36 հաստիքային միավորի համար, ինչպես նաև գումար է նախատեսված գույքի ձեռքբերման և այլ անհրաժեշտ ծախսերի ֆինանսավորման համար:

Ծրագրի անմանումը
«Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ»
Ծրագրի իրականացման նպատակը
Համայնքում մինչև 15 տարեկան դպրոցականների շրջանում զարգացնել հոգևոր, երաժշտական, մշակութային դաստիարակությունը՝ գեղագիտական, ազգային հոգևոր մշակույթի ուսուցման, տաղանդավոր երեխաների հայտնաբերման համար:
Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է
Մինչև 15 տարեկան դպրոցականների և բարձր տարիքի երիտասարդների շրջանում մշակութային ստեղծագործական ունակությունների զարգացում, հոգևոր, գեղագիտական դաստիարակության ապահովում, կրթամշակութային, դաստիարակչական ծրագրերի իրականացում:
Ծրագրի բյուջեն
2026 թվականի համար նախատեսվում է **106962,8 հազ. դրամ:**
Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը
01 հունվարի – 30 դեկտեմբերի 2026 թվական

Տեղեկանք հիմնավորում

Բյուջեի կազմման համար հիմք է հանդիսացել կազմակերպությունների կողմից ներկայացված նախահաշիվները, տարիֆիկացիաները, երեխաների և խմբերի քանակները, ավագանու կողմից հաստատված հաստիքացուցակները: Ոլորտի ծախսերը նախատեսվել են թվով 5 ՀՈԱԿ-ների և մեկ բյուջետային հիմնարկի պահպանման համար:Նախատեսված սուբսիդիայի գումարները ներառում են կազմակերպությունների աշխատողների աշխատավարձերը՝ 39.6 հաստիքային միավորի համար, իսկ «Գուգարք բնակավայրի մշակույթի տուն» բյուջետային հիմնարկի աշխատողների աշխատավարձը հաշվարկվել է 9 հաստիքային միավորի համար: Պահպանման ծախսերի համար հատկացված միջոցները կուղղվեն կազմակերպությունների զբաղեցրած տարածքների կոմունալ վարձերի վճարմանը, ընթացիկ նորոգմանը, գույքի ձեռքբերմանը:

Ծրագրի անվանումը

«Այլ մշակութային կազմակերպություններ»

Ծրագրի իրականացման նպատակը

Համայնքում զարգացնել երաժշտական, մշակութային դաստիարակությունը՝ ազգային հոգևոր մշակույթի ուսուցման, տաղանդավոր երեխաների հայտնաբերման համար:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է

Երիտասարդների շրջանում մշակութային ստեղծագործական ունակությունների զարգացում, հոգևոր, երաժշտական և գեղագիտական դաստիարակության ապահովում, կրթամշակութային, դաստիարակչական ծրագրերի իրականացում:

Ծրագրի բյուջեն

Նշված ուղղությամբ 2026 թվականի համար նախատեսվում է **246294,5 հազ. դրամ:**

Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը

01 հունվարի – 30 դեկտեմբերի 2026 թվական

Տեղեկանք հիմնավորում

Բյուջեի կազմման համար հիմք է հանդիսացել կազմակերպությունների կողմից ներկայացված նախահաշիվները, տարիֆիկացիաները և ավագանու կողմից հաստատված հաստիքացուցակները: Ոլորտի համայնքային կազմակերպությունները թվով 6-ն են: Աշխատավարձը հաշվարկված է 145 հաստիքային միավորի համար, ինչպես նաև գումար է նախատեսված զբաղեցրած տարածքի կոմունալ վարձերի վճարման, ընթացիկ նորոգման, գույքի ձեռքբերման համար:

Ծրագրի անվանումը

«Հրատարակչություններ, խմբագրություններ»

Ծրագրի իրականացման նպատակը

Աջակցել հրատարակչական և հեռարձակման գործունեությամբ զբաղվող կազմակերպություններին:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է

Նպաստել թերթերի, ամսագրերի տպագրման և հեռուստատեսային հաղորդումների պատրաստման գործընթացին:

Ծրագրի բյուջեն

Նշված ուղղությամբ 2026 թվականի համար նախատեսվում է **2000.0 հազ. դրամ:**

Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը

03 հունվարի – 30 դեկտեմբերի 2026 թվական

Տեղեկանք հիմնավորում

Ծրագրով նախատեսվում է ցուցաբերել ֆինանսական աջակցություններ «Լոռու մարզ» թերթի խմբագրությանը և համայնքում գործող հեռուստաընկերություններին:

Ծրագրի անվանումը
«Երիտասարդական ծրագրեր»
Ծրագրի իրականացման նպատակը
Աջակցել երիտասարդական ծրագրերի և միջոցառումների իրականացման աշխատանքներին:
Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է
Ակտիվացնել երիտասարդության մասնակցությունը համայնքի մշակութային կյանքին:
Ծրագրի բյուջեն
Նշված ուղղությամբ 2026 թվականի համար նախատեսվում է **6500.0 հազ. դրամ:**
Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը
01 հունվարի – 30 դեկտեմբերի 2026 թվական
Տեղեկանք հիմնավորում
Ծրագրով նախատեսվում է կազմակերպել երիտասարդական ծրագրերի հետ կապված մի շարք միջոցառումներ:

Ծրագրի անվանումը
«Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ»
Ծրագրի իրականացման նպատակը
Աջակցել համայնքում գործող հասարակական կազմակեպությունների կողմից իրականացվող աշխատանքներին:
Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է
Ներգրավել համայնքի բնակչությանը և երիտասարդներին ակտիվորեն մասնակցելու հասարակական կազմակեպությունների կողմից իրականացվող աշխատանքներին:
Ծրագրի բյուջեն
Նշված ուղղությամբ 2026 թվականի համար նախատեսվում է **8350.0 հազ. դրամ:**
Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը
01 հունվարի – 30 դեկտեմբերի 2026 թվական
Տեղեկանք հիմնավորում
Ծրագրով նախատեսվում է ցուցաբերել ֆինանսական աջակցություններ համայնքում գործող հասարակական կազմակերպություններին:

Ծրագրի անվանումը
«Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող)»
Ծրագրի իրականացման նպատակը
Համայնքի բնակիչներին, հատկապես երիտասարդությանը մասնակից դարձնել մշակութային կյանքին:
Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է
Համայնքային մշակութային միջոցառումների, տոնակատարությունների, Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումների կազմակերպում, որոնց արդյունքում ժողովրդին, հատկապես երիտասարդությանը և համայնքի հյուրերին կմատուցվեն բարձրաճաշակ մշակութային ծառայություններ:
Ծրագրի բյուջեն
Նշված ուղղությամբ 2026թ. համար նախատեսվում է **52000.0 հազ. դրամ:**
Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը
01 հունվարի – 30 դեկտեմբերի 2026 թվական

Տեղեկանք հիմնավորում

Ծրագրով նախատեսված են պետական, ազգային տոներին, հիշատակի օրերին նվիրված, համաքաղաքային, նախադպրոցական համակարգի աշխատանքների բարելավմանը նպաստող միջոցառումները:

Ծրագրի անվանումը

«Նախադպրոցական կրթություն»

Ծրագրի իրականացման նպատակը

Համայնքի 3-6 տարեկան երեխաների ցերեկային խնամք մանկապարտեզներում՝ ապահովելով նրանց ֆիզիկական, մտավոր և հոգևոր զարգացումը, առողջության ամրապնդումը, ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, ինչպես նաև տարրական դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է

Համայնքի 3-6 տարեկան երեխաների ընդգրկում համայնքում գործող 23 մանկապարտեզներում, երեխա-հաճախումների թվի ավելացում, նախադպրոցական կրթական ծրագրերի իրականացման շրջանակներում երեխաների ընդհանուր զարգացման ապահովում:

Ծրագրի բյուջեն

2026 թվականի համար այս ուղղությամբ նախատեսված է **1843305,5 հազ. դրամ:**

Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը

01 հունվարի – 30 դեկտեմբերի 2026 թվական

Տեղեկանք հիմնավորում

Բյուջեի կազմման համար հիմք է հանդիսացել կազմակերպությունների կողմից ներկայացված նախահաշիվները, տարիֆիկացիաները, ավագանու կողմից հաստատված հաստիքացուցակները և խմբերի քանակները: Ոլորտի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները 23-ն են: Մանկապարտեզ հաճախող երեխաների ցուցակային թիվը, ըստ ներկայացված փաստաթղթերի կազմում է 2243 երեխա: Նախատեսված սուբսիդիայի գումարը ներառում է կազմակերպությունների աշխատողների թվով 360 հաստիքային միավորների համար նախատեսված աշխատավարձը, ինչպես նաև զբաղեցրած տարածքի կոմունալ վարձերի և այլ ծառայությունների վճարման, ընթացիկ նորոգման, գույքի ձեռքբերման և մանկապարտեզ հաճախող երեխաների սննդի ծախսերը: Համայնքի ղեկավարի կողմից ներկայացված մանկապարտեզներում ներառված կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ ուսուցման վերաբերյալ, ինչպես նաև զինծառայող ծնողի ռազմական գործողություններին մասնակցած կամ զոհված զինծառայողի երեխաների վերաբերյալ հայտերին համապատասխան ՀՈԱԿ-ներում կընդգրկվեն պետության կողմից համայնքին ընթացիկ դրամաշնորհների հատկացման գումարները:

Սուբվենցիոն ծրագրով նախատեսված է իրականացնել Վանաձոր համայնքի Շահումյան բնակավայրում մանկապարտեզի նոր մասնաշենքի կառուցումը: Ծրագրում ներառվել են նաև 2024 և 2025 թվականներին չավարտված սուբվենցիոն ծրագրերը:

Ծրագրի անվանումը

«Արտադպրոցական դաստիարակություն»

Ծրագրի իրականացման նպատակը

Համայնքում դպրոցականների շրջանում զարգացնել երաժշտական և սպորտային դաստիարակությունը տաղանդավոր երեխաների հայտնաբերման համար:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է

Երիտասարդության շրջանում սպորտային և երաժշտական ստեղծագործական ունակությունների զարգացում և արտադպրոցական դաստիարակչական ծրագրերի իրականացում:

Ծրագրի բյուջեն
2026 թվականի համար այս ուղղությամբ նախատեսված է **831539,3** հազ. դրամ:
Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը
01 հունվարի – 30 դեկտեմբերի 2026 թվական
Տեղեկանք հիմնավորում
Բյուջեի կազմման համար հիմք է հանդիսացել կազմակերպությունների կողմից ներկայացված նախահաշիվները, տարիֆիկացիաները, ավագանու կողմից հաստատված հաստիքացուցակները և խմբերի քանակները: Ոլորտի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները 17-ն են՝ թվով 4 երաժշտական դպրոց, մեկ արվեստի դպրոց, մեկ պարարվեստի դպրոց, մեկ գեղարվեստի դպրոց և 10 մարզադպրոց, որոնց համար կազմակերպվում է արտադպրոցական կրթություն: Կրթություն ստացող երեխաների ցուցակային թիվը ըստ ներկայացված փաստաթղթերի կազմում է 3168 երեխա: Նախատեսված սուբսիդիայի գումարը ներառում է կազմակերպությունների աշխատողների թվով 453 հաստիքային միավորների համար աշխատավարձը, ինչպես նաև զբաղեցրած տարածքի կոմունալ վարձերի և այլ ծառայությունների վճարման, ընթացիկ նորոգման, գույքի ձեռքբերման ծախսերը: Համայնքային ենթակայությամբ գործում են նաև մեկ բյուջետային հիմնարկ՝ Գուգարք բնակավայրի մարզադպրոցը:Մարզադպրոց հաճախող երեխաների թիվը 89-ն է, աշխատավարձի հոդվածով նախատեսված գումարը հաշվարկվել է 8 հաստիքային միավորի համար:
Նախատեսված սուբսիդիայի գումարներից բացի թվով 4 երաժշտական և մեկ արվեստի դպրոցում պետական պատվերով նախատեսվում է իրականացնել ժողովրդական նվագարանների ուսուցման արտադպրոցական դասընթացներ, որի շրջանակներում ակնկալվում է շուրջ 4575.7 հազ. դրամի ֆինանսավորում ՀՀ պետական բյուջեից:
Ծրագրով նախատեսվում է նաև Վանաձոր համայնքի լավագույն մարզական արդյունքներ ցուցաբերած մարզիկներին հատկացնել ամենամսյա և եռամսյակային սպորտային նպաստներ: Եվրոպայի և ՀՀ առաջնությունների հաղթող և մրցանակակիր մարզիկներին և նրանց մարզիչներին հատկացնել միանվագ սպորտային նպաստ:

Ծրագրի անվանումը
«Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ»
Ծրագրի իրականացման նպատակը
Համայնքի կրթական համակարգին տրամադրել օժանդակ ծառայություններ:
Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է
Նպաստել համայքնի կրթական գործընթացի կազմակերպմանը:
Ծրագրի բյուջեն
2026 թվականի համար այս ուղղությամբ նախատեսված է **2000.0 հազ. դրամ:**
Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը
01 հունվարի – 30 դեկտեմբերի 2026 թվական
Տեղեկանք հիմնավորում
Նախատեսվում է նախադպրոցական, տարական և միջնակարգ խմբերում միջոցառումների հետ կապված ձեռք բերել տնտեսական ապրանքներ, նյութեր, նվերներ և այլ պրանքներ:

Ծրագրի անվանումը
«Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)»
Ծրագրի իրականացման նպատակը
Վանաձոր համայնքի բյուջեի միջոցների հաշվին սոցիալական բնույթի ծրագրերին դրամական աջակցություն:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է

Սոցիալական աջակցության ծրագրերի իրականացման գործում տեղական ինքնակառավարման մարմինների դերի մեծացում:

Ծրագրի բյուջեն

2026 թվականի համար նախատեսվում է՝ **30000.0 հազ. դրամ:**

Ծրագրի գործունեության սկիզբը և ավարտը

01 հունվարի – 30 դեկտեմբերի 2026 թվական

Տեղեկանք հիմնավորում

Վանաձոր համայնքի բյուջեի միջոցների հաշվին իրականացնել սոցիալական բնույթի տարբեր ծրագրերին դրամական աջակցություն:

Պահուստային ֆոնդ

2026 թվականի բյուջեի վարչական մասում ձևավորվել է պահուստային ֆոնդ, որը նպատակաուղղված է տվյալ բյուջետային տարում չնախատեսված պարտավորությունների կատարմանը և 2026 թվականի բյուջեի համար այն նախատեսվել է վարչական եկամուտների 14.0 տոկոսի չափով՝ 754688,2 հազ. դրամ:

Սուբվենցիաներ

2026 թվականին նախատեսված սուբվենցիաները համայնքի կողմից իրականացվող առանձին նպատակային ծախսատեսակների (ծրագրերի) կատարման համար անհատույց և անվերադարձ կարգով տրվող դրամական միջոցներն են: Հիշյալ գումարների հատկացումները իրականացվելու են Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային միջոցների հաշվին առանձին որոշումներով, որից հետո համայնքի հետ կկնքվի համապատասխան պայմանագիր:

Հարց ու պատասխան

Գ.Քոթանջյան – Հարց ունեմ ավտոբուսների հետ կապված, շահագործվում է թվով 5 ավտոբուս, ինչպես է կատարվում եկամուտների հավաքագրումը և մինչ օրս որքան է կազմել եկամտաբերությունը հավաքագրումից, ներկայացրեք նաև ընթացակարգը:

Հ.Վիրաբյան – Համայնքային միջոցներից ոչ ծախսային, ոչ էլ եկամտային գումարներ նախատեսված չեն «Վանաձորի Ավտոբուս» ՓԲԸ համար, իրենք իրենց իսկ հավաքագրված գումարների հաշվին են ստանում աշխատավարձ և իրականացնում ավտոբուսների շահագործումը: Համայնքապետարանի առևտրի սպասարկման և տրանսպորտի բաժինը պարբերաբար հետևում է այդ թվերին և քանի որ այս տարվա վերջում «Վանաձորի Ավտոբուս» ՓԲԸ նախատեսում է հրավիրել ժողով, այդ ժամանակ կհստակեցվի հավաքագրված գումարների չափը: Գրավոր ձևով դիմեք, ձեզ կտրամադրենք հստակ տեղեկատվություն:

Ա.Մովսիսյանը մոտավոր թիվ նշեց՝ երթուղուց կախված, մեկ ավտոբուսը ապահովում է օրական 25.000-35.000 ՀՀ դրամ եկամուտ:

«Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման ծրագրին մասնակցելու մասին» համայնքի ավագանու որոշման նախագիծը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լիլյա Դավթյանը:

Ողջունում եմ բոլորին, նախ կներկայացնեմ այն սուբվենցիոն ծրագրերը, որոնք անցել են հանրային քննարկում, այնուհետև որոնք նախատեսվում է ներկայացնել 2026 թվականի սուբվենցիա ստանալու համար:

Մենք նախատեսում էինք Վանաձոր համայնքի կարիքների համար ներհամայնքային ավտոբուսների ձեռքբերման, Հրանտ Մաթևոսյանի անվան զբոսայգու և բազմաբնակարան շենքերի վերելակների (100 հատ) հիմնանորոգման ծրագրերը իրականացնել սուբվենցիաներով, սակայն կարգի փոփոխության հետ կապված նաև, որպես առաջարկ եմ ներկայացնում, տվյալ ծրագրերը կներառենք համայնքի բյուջեում, այսինքն՝ համայնքի բյուջեի միջոցների հաշվին կիրականացնենք:

Ներկայացնեմ այն ծրագրերը որոնք անցել են հանրային քննարկում՝ Բանակի, Բաթումի, Շիրակացու, Մյասնիկյան փողոցների հիմնանարոգում, Դարպաս բնակավայրի գլխավոր ճանապարհի հիմնանարոգում՝ լայնացմամբ, Տարոն-4 թաղամասի գլխավոր փողոցի հիմնանարոգում, Շահումյան և Գուգարք բնակավայրերի մի շարք փողոցների հիմնանորոգում, Շահումյան բնակավայրի մանկապարտեզի նոր մասնաշենքի կառուցում և Վանաձոր համայնքի մի շարք բակերի հիմնանորոգում:

Նոր սուբվենցիոն ծրագրերն են՝

1. ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի մի շարք թաղամասերում կոյուղու կառուցում:
2. ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Չուխաջյան փողոցի հիմնանորոգում՝ 2 կմ տարածքի մասին է խոսքը, որը չէր հիմնանորոգվել նախորդ սուբվեցիոն ծրագրով:
3. ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Տարոն-4 թաղամասի ներհամայնքային փողոցների հիմնանորոգում, ինչպես նաև Տարոն թաղամասի գլխավոր փողոցի հիմնանորոգում:
4. ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Տարոն-2, Տարոն-4 թաղամասերը կապող էստակադայի հիմնանորոգում:
5. ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Ռ.Բոշյան փողոցի հիմնանորոգում:
6. ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Գործարանային փողոցի հիմնանորոգում:
7. ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի մի շարք երկրորդային փողոցների հիմնանորոգում. Տարոն-3 թաղամասի փողոցներ, Ստ.Զորյան, Հ.Հակոբյան, Թևոսյան, Խուդյակովի, Գայի, Ամիրյան,Նար-Դոս,Նիզամի, Խնձորուտ 2-րդ փողոց, Հալաբյան, Մաշտոցի, Մ.Մելքոնյան, Աճառյան, Կնունյանց, Կոմիտասի, Իսրայել Օրու, Աղյուսագործների, Սունդուկյան, Ռաֆֆու, Հերացու, Տարոն-4 նոր կառուցված «ԱՌԴԱ» թաղամասի հարասկից փողոցներ, ինչպես նաև Ղ.Աղայան փողոցի սկզբնամաս, ջրահեռացման համակարգ:
8. ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի մի շարք հրապարակների բարեկարգում՝ Կոմիտասի, Թումանյան և Հայքի հրապարակ: Հայքի հրապարակը ամբողջովին չի բարեկարգվելու, այլ այնտեղ նախատեսում ենք տեղադրել արձան, ինչպես նաև նախատեսվում է լուսավորության որոշակի փոփոխություն:
9. Տեխնիկայի կայանատեղիի կառուցում՝ Տարոն-3 թաղամասում (1-ին փուլ):
10. Կանգառների կառուցում:
11. ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Սայաթ-Նովայի անվան զբոսայգում ատրակցիոնների ձեռքբերում, տեղադրում և սպասարկում:
12. Վանաձոր համայնքի քաղաքային լճերի (3 լճեր կոչվող տարածք) տարածքի բարեկարգում, Տանձուտ գետի հունի մաքրում:
13. Տիգրան Մեծի պողոտայի հիմնանարոգում՝ Հայքի հրապարակից մինչև Թումանյան հրապարակ, ներառելով հանրային կանաչ գոտիները, շենքերի ճարտարապետական ձևավորումն և մայթերը:

Նշեմ նաև, որ 7-րդ և 3-րդ մանկապարտեզները տեղափոխվող ծրագրեր են, մեզ միայն մնում է Շահումյան բնակավայրի մանկապարտեզի կառուցումը, որը կնախատեսվի 2026 թվականի սուբվենցիոն ծրագրով:

Հարց ու պատասխան

Ա.Այվազյան - Արդյոք ՀԿ-ների, ավագանու անդամների կողմից որևէ առաջարկություն ներկայացվել է սուբվենցիոն ծրագրերի հետ կապված, թե՝ ոչ:

Լ.Դավթյան – Հայտարարման օրվանից մինչ օրս, ինչպես 2026 թվականի բյուջեին, այնպես էլ սուբվենցիոն ծրագրերին վերաբերող որևէ առաջարկություն չի ներկայացվել:

Գ.Քոթանջյան – Նշեցիք մի շարք փողոցների հիմանորոգման մասին, արդյոք հերթականությունը որոշված է, թե՝ ոչ:

Լ.Դավթյան – Հարակից փողոցները կանցնեն մեկ մրցույթով՝ աշխատանքները համակարգված իրականացնելու նպատակով:

Գ.Քոթանջյան – Սպորտդպրոցների հետ կապված մեկ տարի առաջ բարձրաձայնվել է Թեթև աթլետիկայի դպրոցի վերանորոգման աշխատանքներ իրականացնելու համար, սակայն ոչինչ չի արվել, ինչն է պատճառը:

Հ.Վիրաբյան – Քանի որ նախատեսվում է Վիկ Դարչինյանի և Ստեփան Սարգսյանի անվան մեծ մարզահամալիրներ կառուցելու ծրագիր կառավարության կողմից, նմանատիպ աշխատանքներ իրականացնելու համար ֆինանսավորման նպատակով նպատակահարմար չենք գտնում դիմել կառավարությանը, քանի որ կառավարությունը ամբողջությամբ զրոյից կառուցում է:

Ի հավելում Լ.Դավթյանը նշեց, որ դիմել են «Ջի Այ Զեթ» ընկերությանը, որպեսզի մարզադպրոցները իրականացնեն որոշակի էներգաարդյունավետության ծրագրեր, որը բավականին կլավացնի մարզադպրոցների վիճակը:

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի Սպորտի և երիտասարդության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Էրիկ Կոստանյանը հավելեց, որ նախատեսվում է նաև Հ.Սաքանյանի անվան մարզադպրոցի ջեռուցումը ևս իրականացնել, ծրագրի արժեքը կկազմի 6 000 000 դրամ:

ՀՀ Լոռու մարզպետ Արեն Մկրտչյան. հարգելի պարոն Փելեշյան, հարգելի ներկաներ Լոռու մարզպետի աշխատակազմը պատրաստվում է առաջարկությամբ հանդես գալ և այն առաջարկության փաթեթը, որը հիմա կներկայացնեմ ձեր ուշադրությանը այս օրերի ընթացքում լայնորեն քննարկվել է թե Վանաձորի համայնքապետարանի մեր գործընկերների հետ և թե կառավարության մեր գործընկերների հետ: Սա ընդհանուր գծերով ընդգրկում է այն ծրագրերը, որ ներկայացվեց համայնքապետարանի կողմից, բայց մինչ բուն ծրագրին անցնելը ուզում եմ ընդգծել, որ մոտ 13 միլիարդ դրամ ընդհանուր արժողությամբ, ավելի քան 13 միլիարդ դրամ արժողությամբ փաթեթի մասին է խոսքը և ինչպես պարոն Փելեշյանը նշեց 3-րդ հանրապետության պատմության ընթացքում Վանաձորի համար, մեկ տարվա համար նախատեսված սա աննախադեպ բյուջեի մի մասն է և աննախադեպ ծրագրային փաթեթ:

Ես նախ ուզում եմ առաջարկությունները սկսել փողոցներից, խոսքը շուրջ 42 փողոցների հիմնանորոգման մասին է, մասնավորապես Տիգրան Մեծ պողոտայի հիմնանորոգում՝ ներառյալ հանրային կանաչ գոտիներ, շենքերի ճարտարապետական ձևավորումը, մայթերը մինչև Թումանյան հրապարակ՝ 1 կմ 170մ, նախնական արժեքը 643.500.000 դրամ, ինչու եմ արժեքները նշելիս ընդգծում նախնական, որովհետև նախագծանախահաշվային փաստաթղթերը բնականաբար դեռ պատրաստ չեն և սա մոտարկված արժեքներ են, որոնք որոշակի շեղումներ կտան՝ փաստաթղթերի պատրաստ լինելուց հետո: Մենք ունենք էսքիզ, որոշակի արդեն աշխատանքներ իրականացված, որ պարոն Փելեշյանի և մեր գործընկերների հետ մանրամասն քննարկել ենք: Ոչ միայն փողոցի ասֆալտապատման մասին է խոսքը, այլ մայթերի սալարկման, լուսավորության ու համակարգի անցկացման:

Նախատեսվում է շենքերի ճակատային հատվածների լուսավորության համակարգի անցկացում: Կա ճարտարապետների խումբ, որոնց հետ աշխատում ենք, ժամանակակից արվեստի գործեր պետք է տեղադրվեն մայթեզրերին, որոնք նաև գիշերային լուսավորությամբ պետք է ընդգծվեն: Պետք է նշեմ, որ Տիգրան Մեծ պողոտան իր ճարտարապետական տեսքով իսկապես առանձնանում է և խնդիր կա քաղաքի ճարտարապետական դեմքը ընդգծել գիշերային լուսավորության համակարգի անցկացմամբ:

Իսկապես մեծ նախագիծ է և հաշվի առնելով, որ սա քաղաքի կենտրոնական արտերիան է, մենք չենք ուզում միայն ասֆալտապատմամբ և մայթերի սալարկմամբ այստեղ սահմանափակվել և բնականաբար հասկանում ենք նաև, որ այս ծրագիրն իրագործելու նպատակով մայթերն ամբողջությամբ պետք է բացազատվեն:

Չուխաջյան փողոցի հիմնանորոգում՝ 991.209.000 դրամ, 23.000 շահառու: Տարոն-4 թաղամասի ներհամայնքային փողոցներ, Տարոն 4-ի վրա մեծ շեշտադրում է արվել 6 կմ 300մ նախնական երկարությամբ ցանց է նախատեսվում: 13 փողոց Տարոն 4-ում և ինչու փողոցները չեմ առանձնացնում, որովհետև փողոցները մեծամասամբ անվանակոչված չեն, բայց սա շատ ծավալուն փաթեթ է Տարոն 4-ի համար:

Տարոն-3 թաղամասի ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգում՝ 550մ, 102.000.000 դրամ:

Տարոն-2 և Տարոն-4 թաղամասերը կապող էստակադայի ավարտ 210.000.000 դրամ նախնական արժեք, 35.000 շահառու: Խորհրդային տարիներին կիսատ մնացած էստակադայի մնացորդներ կան, որ պետք է դեռ գնահատվեն, պետք է հասկանանք դրանց վթարայնության աստիճանը և փորձենք էստակադան ավարտին հասցնենք:

Մյասնիկյան փողոցի հիմնանորոգում՝ 1կմ 300մ, 325.000.000 նախնական արժեքով, 12.000 բնակիչ:

Ստեփան Զորյան փողոցի հիմնանորոգում՝ 1 կմ 660մ, շուրջ 300.000.000 դրամ, 18.000 բնակիչ, ինչպես նաև Վանաձորի բժշկական կենտրոնն էլ է այդ ճանապարհին:

Հակոբյան փողոցի հիմանորոգում՝ 1 կմ 500մ, 270.000.000 դրամ, շուրջ 12.000 բնակիչ:

Թևոսյան փողոցի հիմնանորոգում շուրջ 2 կմ՝ 354.000.000 դրամ:

Խուդյակով փողոցի հիմնանորոգում 800մ՝ 136.000.000 դրամ:

Գայի փողոցի հիմնանորոգում 800մ՝ 144.000.000 դրամ:

Ամիրյան փողոցի հիմնանորոգում 950մ՝ 171.000.000 դրամ:

Նար-Դոսի փողոցի հիմնանորոգում 910մ՝ 154.000.000 դրամ (այստեղ 1983 թվականին է վերջին անգամ հիմնանորոգման աշխատանքներ իրականացվել):

Նիզամի փողոցի հիմնանորոգում 2կմ՝ 336.000.000 դրամ,13.000 բնակիչ:

Խնձորուտ 2-րդ փողոցի հիմնանորոգում 600մ՝ 90.000.000 դրամ:

Հալաբյան փողոցի մասնակի հիմնանորոգում, այստեղ անավարտ կիսատ մայթերի մասին է խոսքը:

Մաշտոցի փողոցի հիմնանորոգում 1կմ 450մ՝ 261.000.000 դրամ, 11.000 բնակիչ (այստեղ 1983 թվականին է վերջին անգամ հիմնանորոգման աշխատանքներ իրականացվել):

40 տարի է այս փողոցների հիմնանորոգման, ասֆալտապատման աշխատանքներ չեն իրականացվել:

Մելքոնյան փողոցի հիմնանորոգում 600մ՝ 56.000.000 դրամ:

Աճառյան փողոցի հիմնանորոգում 500մ՝ 80.000.000 դրամ:

Կնունյանց փողոցի հիմնանորոգում 900մ՝ 142.000.000 դրամ:

Կոմիտասի փողոցի հիմնանորոգում 450մ՝ 72.000.000 դրամ:

Իսակովի փողոցի հիմնանորոգում 260մ՝ 54.000.000 դրամ:

Նախատեսվում է Գուգարք, Շահումյան, Դարպաս բնակավայրերի ներհամայնքային փողոցների հիմնանորոգում: Գուգարքում 2 կմ 240.000.000 դրամ և Շահումյանում և Դարպասում 1-ական կմ 120.000.000 դրամ: Սա ճանապարհաշինության մասով:

Ինչպես արդեն նշվեց Կոմիտասի և Թումանյանի հրապարակների բարեկարգում է նախատեսվում, յուրաքանչյուրի մոտավոր արժեքները 400.000.000 դրամ: Եվ թե Թումանյանի, և թե Կոմիտասի հրապարակները լայնածավալ հիմնանորոգվելու են: Կոմիտասի հրապարակը միջպետական ճանապարհի կողմից քաղաքի մուտքն է և իսկապես շատ կարևորում եմ, որ հենց մուտքից կարողանանք ունենալ բարեկարգ հրապարակ, որը պատկերացնում ենք:

Տեխնիկայի պարկ Տարոն-3 թաղամասում 357.000.000 դրամ: Առիթից օգտվելով նաև հակիրճ անդրադառնամ հնչած հարցին, սա շատ կարևոր է ունենալ մեր քաղաքում:

Ի հավելում Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատար Ա.Փելեշյանը նշեց նաև, որ մշակութային ծրագրեր իրականացնելու համար բյուջեյում նախատեսվում է ավելացում 50.000.000 դրամով:

Հարց ու պատասխան

Ռ.Աղազարյան – Ըստ էության սուրճի ապարատների հետ կապված հարցը կարգավորվել է, սակայն նորից տեղադրվում են քաղաքի այլ հատվածներում՝ շենքերին կպած: Իմ նպատակը եղել է դպրոցների շրջակայքում տեղադրված սուրճի ապարատների վերացումը, ինչ եք նախատեսում այս մասով:

Ա.Մկրտչյան - Իմ ելույթներում բազմիցս անդրադարձել եմ այս հարցին և այսօր ներկայացված ծրագրերը, որոնք պետք է իրականացվեն նաև մայթերում և կանաչ գոտիներում, ուստի անհրաժեշտ է լինելու մայթերը ազատել:

Ա.Մովսիսյան – Առաջարկում եմ Բոշյան փողոցը ևս ներառել փողոցների հիմնանարոգման ծրագրում:

Ա.Մկրտչյան – Շնորհակալություն առաջարկի համար, աշխատանքների պլանավորման ընթացքում նկատի կունենանք:

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքում տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու և Վանաձոր համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 5-ի թիվ 4-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Վանաձոր համայնքի ավագանու որոշման նախագիծը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և տուրիզմի հարցերի բաժնի պետ Քրիստինե Մադոյանը:

Ք.Մադոյանը ողջունեց ներկաներին և անդրադարձավ Վանաձոր համայնքի ավագանու որոշմանը, որը վերաբերում էր արտոնություններ սահմանելուն: Մասնավորապես՝

1) Վանաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների՝ արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատությունների (երաժշտական, արվեստի, գեղարվեստի, պարարվեստի դպրոցներ, մարզադպրոցներ, մշակույթի տներ և այլ) ծառայություններից օգտվողների համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են արտոնություններ՝ տեղական վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ.

ա. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար.

բ. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորամասերում ծառայության ժամանակ զոհված կամ 1-ին կարգի հաշմանդամ դարձած զինծառայողների,

ազատամարտիկների երեխաների համար.
գ. Հաշմանդամ երեխաների համար.
դ. Փախստականի կարգավիճակ ունեցող ընտանիքների երեխաների և աղետի կամ պատերազմական գոտուց Հայաստան (Վանաձոր) տեղափոխված հայ ընտանիքների երեխաների համար /այդ թվում մանկապարտեզ հաճախող/.
ե. Չորս և ավելի անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքների մեկ երեխայի համար.
զ. Ուսումնամարզական խմբերի կարգային մարզիկների համար (մարզադպրոցներ).
է. Սպորտային կատարելության խմբերի մարզիկների համար (մարզադպրոցներ):
2) Վանաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների՝ արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատությունների (երաժշտական, արվեստի, գեղարվեստի, պարարվեստի դպրոցներ, մարզադպրոցներ, մշակույթի տներ և այլ) ծառայություններից օգտվողների համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են արտոնություններ՝ տեղական վճարի նկատմամբ 50 տոկոսի դրույքաչափի կիրառմամբ.
ա. 1-ին կարգի հաշմանդամ ծնող ունեցող երեխաների համար.
բ.Ընտանիքի անապահովության 35 և ավելի բարձր միավոր ունեցող ընտանիքների 1 երեխայի համար:
գ. Խնամատար ընտանիքներում ընդգրկված երեխաների համար:

3) Վանաձոր համայնքի կարիքների համար բարեգործական հիմունքներով կառուցապատում իրականացնող ընկերությունների և կազմակերպությունների համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են արտոնություններ՝ տեղական վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ.

4) Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող փողոցների հիմնանորգման դեպքում կառուցապատողի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են արտոնություններ՝ տեղական վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ.

5) Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի կառուցապատման աշխատանքների իրականացման դեպքում կառուցապատողի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են արտոնություններ՝ տեղական վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ:

Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 5-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքում տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու և Վանաձոր համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 38-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 4-Ն որոշումը:

Սույն որոշումն ուժի մեջ կմտնի 2026 թվականի հունվարի 1-ից:
Հանրային քննարկումն ավարտվեց ժամը 16:00-ին:
Հանրային քննարկմանը մասնակցում էին՝
ՀՀ Լոռու մարզպետ Արեն Մկրտչյանը, ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Արսեն Ղարիբյանը, ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռուբեն Մարգարյանը, Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատար Արկադի Փելեշյանը, Համայնքի ղեկավարի խորհրդականներ՝ Էդիկ Հունանյանը, Արման Բերնեցյանը, Համայնքի ղեկավարի օգնականներ՝ Հրաչիկ Ղամբարյանը,

Կարեն Իշխանյանը, Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հայկ Վիրաբյանը, Վանաձոր համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար Աստղիկ Ավետիքյանը, Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր, տեղակալներ և բաժինների աշխատակիցներ, Վանաձորի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Ռոբերտ Աղազարյանը, «Ուղղակի ժողովրդավարություն» ՀԿ նախագահ Գևորգ Քոթանջյանը, «Լոռի» հեռուստաընկերության գլխավոր խմբագիր Նարինե Ավետիսյանը, Ազատության ռադիոկայանի լրագրող Կարինե Սիմոնյանը:

Նախաձեռնող՝
Վանաձոր համայնքի ղեկավարի
պաշտոնակատար _____ Ա.Փելեշյան

Նիստը վարող՝
Վանաձորի համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղար՝ _____ Հ.Վիրաբյան